ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"17" հունիսի 2025 թ. N 1282-Ա

ք. Երևան

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԻՊՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հաստատել «Տեղեկատվական անվտանգության և կրիպտոգրաֆիայի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն Հավելվածի:

2. «Տեղեկատվական անվտանգության և կրիպտոգրաֆիայի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արման Դարբինյանին՝ սույն հրամանով հաստատված «Տեղեկատվական անվտանգության և կրիպտոգրաֆիայի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հնգօրյա ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

6/17/2025

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2025 թվականի հունիսի 17-ի N 1282-Ա հրամանի

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԻՊՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ք. ԵՐԵՎԱՆ 2025թ.

ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Տեղեկատվական անվտանգության և կրիպտոգրաֆիայի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ նաև՝ պետական կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է տեղեկատվության անվտանգության ոլորտում գործունեություն իրականացնելու նպատակով:
2. Պետական կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ:
3. Պետական կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
4. Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
5. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:
6. Պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
7. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում կազմակերպության պատրավորությունների իսկ պետական կազմակերպությունը՝ հիմնադրի պատրավորությունների համար:
8. Պետական կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Տեղեկատվական անվտանգության և կրիպտոգրաֆիայի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ռուսերեն լրիվ՝ ГОСУДАРСТВЕННОЙ НЕКОММЕРЧЕСКОЙ ОРГАНИЗАЦИИ «НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ И КРИПТОГРАФИИ»

անգլերեն լրիվ՝ CHARTER OF THE NATIONAL CENTER FOR INFORMATION SECURITY AND CRYPTOGRAPHY STATE NONPROFIT ORGANIZATION

9. Պետական կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/3:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

10. Պետական կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) գործունեության նպատակն է տեղեկատվության անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող ու տեղեկատվության անվտանգության ապահովման աշխատանքների իրականացումը համակարգող լիազոր մարմիններին աջակցության ցուցաբերումը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում էլեկտրոնային կառավարման համակարգերի և տեղեկատվության փոխանակման գործընթացների անվտանգության ապահովմանը.

2) գործունեության առարկան է էլեկտրոնային կառավարման համակարգերի և տեղեկատվության փոխանակման գործընթացների անվտանգության ապահովման նպատակով նորմերի մշակումը, մեթոդական ուղեցույցների կազմումը, մասնագիտական դասընթացների կազմակերպումը, համապատասխան մասնագետների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպումը և անցկացումը, տեխնիկական, ծրագրաապարատային լուծումների մշակումը, տեղեկատվական անվտանգության բնագավառում հետազոտական, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, այդ նպատակով պետական մարմինների, այդ թվում՝ պետական մարմիններում տեղեկատվական անվտանգության ապահովման աշխատանքների իրականացումը, համակարգող լիազոր մարմնի, ինչպես նաև ոլորտային (իրավասու) կազմակերպությունների հետ փոխգործակցությունը.

3) գործունեության տարածքն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության տարածքը.

11. Պետական կազմակերպությունն իրավունք ունի գովազդի նպատակով օգտագործելու իր ձևաթղթերը, անվանումն ու խորհրդանիշը, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով կարող է թույլատրել դրանց օգտագործումը այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

12. Պետական կազմակերպությունն ապահովում է իրեն ամրացված շենքերի, շինությունների և կառույցների պահմանումն ու օգտագործումը:

13. Պետական կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

1) իր կողմից մշակված ծրագրաապարատային լուծումների վաճառքը, սպասարկման վճարովի ծառայությունների մատուցումը, ինչպես նաև մասնագետների որակավորման բարձրացման նպատակով՝ վճարովի դասընթացների կազմակերպումը.

14. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

15. Պետական կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթը ենթակա է օգտագործման սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:

16. Պետական կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերած գույքից:

18. Պետական կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

19. Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

20. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքը:

21. Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է պետական կազմակերպությունը:

22. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

23. Պետական կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի) լիազորված պետական մարմնի, ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների հսկողական ծառայությունների կողմից՝ իրենց իրավասությունների սահմաններում:

4. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

24. Հիմնադրի որոշմամբ պետական կազմակերությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

25. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

26. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

27. Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ:

28. Պետական կազմակերպությանն ամրացված գույքը վարձակալության է հանձնվում Կառավարության հաստատած կարգով: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ամբողջությամբ ուղղվում են պետական բյուջե:

29. Վարձակալության չհանձնված ամրացված գույքի օգտագործման արդյունքում պետական կազմակերպության ստացած եկամուտները պետական կազմակերպության սեփականությունն են:

30. Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

31. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց իրավունքի պետական գրանցման պահից:

5. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

32. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են՝ հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը և գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը:

33. Պետական կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը:

34. Լիազորված պետական մարմինը.

1) ապահովում է պետական կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման համար,

2) սույն կանոնադրության համաձայն պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է պետական կազմակերպության տնօրենին, ինչպես նաև համաձայնություն է տալիս կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի նախագծերին,

3) իրականացնում է պետական կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը,

4) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,

5) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերստուգման արդյունքները,

6) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանման նկատմամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում հիմնադրի որոշմամբ, համաձայնություն է տալիս կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

7) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները, տարեկան հաշվեկշիռը և կազմակերպության աշխատողների հաստիքացուցակը,

8) իրականացնում է օրենքով վերապահված այլ լիազորություններ:

35. Պետական կազմակերպության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը օրենքով, հիմնադրի որոշմամբ, լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում իրականացնում է պետական կազմակերպության գործունեության ընթացիկ ղեկավարումը և կրում է անձնական պատասխանատվություն կազմակերպության համար սահմանված իրավասությունների իրականացման համար:

36. Պետական կազմակերպության գլխավոր տնօրենի մրցույթը, ընտրությունը (նշանակումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը կողմից սահմանված ընդհանուր կարգին և չափորոշիչներին համապատասխան:

37. Պետական կազմակերպության գլխավոր տնօրենին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:

38. Լիազորված պետական մարմնի ղեկավարը, գլխավոր տնօրենը, նրա տեղակալները, պետական կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող պետական կազմակերպության:

39. Պետական կազմակերպության գլխավոր տնօրենը կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական և այլ ակտերի, հիմնադրի որոշումների և լիազորված պետական մարմնի որոշումների ու կնքած պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

40. Պետական կազմակերպության գլխավոր տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և պետությանը պատճառված վնասի համար: Գլխավոր տնօրենի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

41. Պետական կազմակերպության գլխավոր տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և լիազորված պետական մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը և ֆինանսական միջոցները,

3) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ, պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում (այսուհետ՝ գանձապետարան) բացում է հաշիվներ,

6) կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի նախագծերը նախապես համաձայնեցնում է պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հետ,

7) կատարում է պարտականությունների բաշխում իր տեղակալների միջև,

8) սահմանում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

9) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում պետական կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

10) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

11) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, իր լիազորությունների սահմաններում, արձակում է հրամաններ, կարգադրություններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

12) իրականացնում է կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ,

13) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում պետական կազմակերպության կառուցվածքը և աշխատողների թիվը,

14) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում պետական կազմակերպության աշխատողների հաստիքացուցակը,

15) հաստատում է պետական կազմակերպության ընդհանուր և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ,

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

42. Պետական կազմակերպության գլխավոր տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

43. Պետական կազմակերպության գլխավոր տնօրենի բացակայության դեպքում լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն գլխավոր տնօրենի լիազորություններն իրականացնում է նրա տեղակալներից մեկը:

44. Պետական կազմակերպության աշխատողների աշխատանքային իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

6. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

45. Պետական կազմակերպության ֆինանասկան միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համապատասխան հոդվածներով հատկացված միջոցներից և այլ աղբյուրներից, ձեռնարկատիրական գործունեությունից, հովանավորչական, նվիրատվական միջոցներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:

46. Ստացված բյուջետային միջոցները, ինչպես նաև կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը տնօրինում է պետական կազմակերպությունն իր կանոնադրական նպատակների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

47. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Օրենսգրքով սահմանված կարգով ինչպես նաև սնանկության հետևանքով:

48. Պետական կազմակերպության լուծարմամբ նրա գործունությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

49. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

50. Պետական կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

51. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Օրենսգրքով սահմանված կարգով:

52. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

(կազմված է 17 հունիսի 2025թ. և բաղկացած է 9 թերթից)

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2025 թվականի հունիսի 17-ի N 1282-Ա
հրամանով

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարար
ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
«23» 06 2025թ.

գրանցման համար՝ 964.110.1463753

ՀՎՀՀ՝ 08301508

աշխատակից

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԻՊՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ